Գրեաց ապա և ինքն յայտ արարեալ զբանս թղթոց միաբանացն Երուսաղէմի, ուր յաւելու ասել. «Արդ աղաչեմք և մեք զվանականս և զիշխանս Հայոց, գրել առ վարդապետս իւրեանց սիրել զխաղաղութիւն եւ երթալ զհետ նորա, որպէս և մեք. զի երկոքին աղդքս հպատակ եմք Արքայի, և չէ արժան լինել դայթակղութեան 'ի միջի մերում, և վերստին աղաչեմք առաքել զդիր մեր առ նոսա, զի դիտասցեն և ծանիցեն զամենայն, և լինիցին իսկ պատուելիք ըստ անուանց իւրեանց։

Ի սմին ժամանակի եհաս յԵրուսաղէմ Յակոբ վարդապետ Նալեան ընդ ուխտաւորս, ունելով ընդ ինքեան եւ զոմանս 'ի վարդապետաց։ Սա երեր ընդ իւր զպատուական չուրջառս, վարագոյրս և այլ աղնիւ ընծայս 'ի Յովհաննու Պատրիարքէ, զոր ընկալեալ Գրիգորի, բերկրեցաւ յոյժ, մանաւանդ 'ի տեսանելն զՅակոբ վարդապետ. զի նովաւ ելից զվախադ սրտի իւրոյ, որ ունէր առ Յովհաննէս. զի բազում անդամ յորդորեալ էր զնա գալ յԵրուսաղէմ և մխիթարել զինքն վասն մահուան Աթոռակալ Հաննա վարդապետի, յորոյ վերայ անմխիթար սգայր. այլ չեղեւ հնար 'ի խառնակութենէ ժամանակին, մանաւանդ սկիզբն առեալ էր ծագիլ խնդիրն Յունաց։ Եկն 'ի սոյն աւուրս յԵրուսաղէմ և մեծ Պեկ ոմն, այր բարի և ծանօթ Սեդրոս Ամիրայի. գնաց առ նա Գրիգոր Պատրիարք ընծայիւք՝ առեալ ընդ իւր և զՅակոբ վարդապետ, առաքեալ էր առ նա աղնիւ ընծայս նաեւ Յովհաննէս Պատրիարք, որ և մատուցին առ նա, և դարձան յետս, (1734 'ի 14 Սեպտեմբեր ամսոյ)։

Իսկ Պատրիարքն Յունաց էառ գաղտ հրովարտակ արքունուստ, զի յաւուր Ճրագալուցի Պասեքին ինքն միայն մտցէ 'ի Գերեզմանն Քրիստոսի և 'ի բաց վարեսցէ զՀայս. և առաքեաց զայն յԵրուսաղէմ և ետ արձանագրել ծածկապէս 'ի դատարանն. ազդ արարին ոմանք զդործն Գրիգորի Պատրիարքի 'ի ձեռն թարգմանին Պօղոսի. ընդ որ զարմացեալ յոյժ, մանաւանդ 'ի վերայ կեղծ բարեկամութեան Յունաց, առաքեաց և ինքն զհրովարտակն, և ըստ մտաց նոցին էառ գիր 'ի դատաւորէն եւ զպատճէն հրովարտակին այնմիկ և առաքեաց առ Յովհաննէս Պատրի-